ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 02 » 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000100

Ձեռնարկողը՝ ***«Արփիմեդ» ՍՊԸ***
ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19

Գործունեությունը՝ ***Դեղագործական գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000100

<02> 11 2020թ.

Դեղագործական գործարանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Արփիմեդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեության տեսակը՝	Ա կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ Բալահովիտ համայնք

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 4-րդ կետի ա. ենթակետի դեղագործական գործարանի կառուցումը և արտադրության կազմակերպումը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

«Արփիմեդ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ մտադիր է Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում կառուցել ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր գործարան, նպատակ ունենալով՝ ընդլայնելու դեղագործական արտադրական կարողությունները, ներդնելու նոր տեխնոլոգիաներ, բարելավելու արտադրանքի պահեստավորումը և աշխատակազմի արտադրական և աշխատանքային պայմանները:

Գործող ընկերությունը հիմնադրվել է 2001 թվականին և ունի Որակի կառավարման միջազգային ստանդարտի (ISO 9001:2008) և պատշաճ արտադրական գործունեության (GMP) հավաստագրեր՝ տրամադրված գերմանական «TUV Rheinland» և ֆրանսիական «AB Certification» ընկերությունների կողմից: Ընկերության արտադրությունը և որակի հսկման լաբորատորիան հագեցված են ժամանակակից արտադրական և անալիտիկ սարքավորումներով, չափիչ սարքերով և ռեակտիվներով: Ընկերությունն արտադրում է ավելի քան 150 անուն դեղամիջոց, որոնց 65 տոկոսն ընդգրկված են ՀՀ հիմնական դեղերի ցանկում: Ընկերության արտադրանքը ներկայացված է նաև արտերկրում:

Նկարագրական մաս. «Արփիմեդ» գործարանի համար հատկացված տարածքը գտնվում է Բալահովիտ գյուղի հյուսիսային մասի արդյունաբերական գոտում՝ բնակելի տարածքներից 660մ հյուսիս-արևելք ուղղությամբ և 530մ հարավ-արևելք ուղղությամբ: Կառուցապատվող հողամասը գտնվում է Բալահովիտ, 8-րդ փողոցի 1-ին նրբանցքի 4 հասցեում և զբաղեցնում է 2.175 հա մակերես: Այն սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը: Հողամասի նպատակային նշանակությունը "Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության" է, գործառնական նշանակությունը՝ «արդյունաբերական» է: Տարածքի հարևանությամբ առկա են քարամշակման ձեռնարկություններ, գրասենյակներ, արտադրական պահեստներ և բազաներ: Գործունեության ենթակա տարածքը հարթ է, ունի հորիզոնականին մոտ թեքություն: Այն նախկինում օգտագործվել է որպես վարելահող, հանդիսանում է ամբողջովին վնասված

/դեգրադացված/ լանդշաֆտ, որտեղ չեն պահպանվել վայրի բնության լանդշաֆտային տարրերը:

Դեղագործական գործարանը կազմված կլինի երեք հիմնական մասնաշենքերից և օժանդակ այլ կառույցներից: Նախագծման համար Բալահովիտ համայնքի ղեկավարի կողմից տրվել է նախագծման թույլտվություն /N 01-03, 22 01 2020 թ./, համաձայն որի 2.175 հա հողամասում կառուցապատման մակերեսը կարող է կազմել ընդհանուր տարածքի մինչև 45%-ը, կանաչապատումը՝ ոչ պակաս, քան 35%-ը: Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ III գոտու համար (9 Բալ և ավելի):

Դեղագործական գործարանի համար նախատեսվող շինությունները ներառում են.

- ոչ ստերիլ հեղուկ դեղամիջոցների արտադրության մասնաշենք, որը մինչև 21.5 մ բարձրությամբ շինություն է,
- հակաուռուցքային դեղերի մասնաշենք, որը երկհարկանի շինություն է, մինչև 16մ բարձրությամբ,
- գրասենյակային և լաբորատորիայի մասնաշենք՝ մինչև 19.3մ բարձրությամբ շինություն,
- հակաբիոտիկների արտադրության մասնաշենք,
- ընդհանուր օգտագործման պահեստ, կաթսայատուն և ընդհանուր օգտագործման մասնաշենք;

Նախատեսվում է կառուցել նաև պահակատուն և ենթակայան, ինչպես նաև վերանորոգել, կամ որոշ հատվածներում կառուցել նոր պարիսպ: Շինությունների տանիքներին նախատեսված է տեղադրել արևային համակարգեր, որոնք բաղկացած կլինեն՝ էլեկտրաէներգիայի արտադրության ֆոտովոլտային և ջրատաքացուցիչ համակարգերից:

Մեքենաների ավտոկայանատեղի մուտքը իրականացվելու է հողամասի հյուսիսային մասից՝ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով: Շինությունների պատերը նախատեսվում են իրականացնել պեմզաբլոկներով՝ արտաքին-երեսպատումով: Ծածկերը Ե/Բ միաձույլ սալեր են, միջնորմները՝ պեմզաբլոկ, գիպսաստվարաթուղթ: Տանիքը նախատեսված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացումով:

Գործարանի ջրամիացումն իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրված ջրամիացման և ՀՀ հիդրանտի տեղադրման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ նախագծված տարածքի հարևանությամբ անցնող Բալահովիտի համայնքային ջրագծից՝ կառուցելով դիտահորեր: Կոյուղաջրերը հավաքվելով բակային ցանցում, արտաքին խողովակով միացվելու են «Կոտայք» գարեջրի գործարանի կոյուղատարին:

Գործարանի ջեռուցումը նախատեսված է կենտրոնացված համակարգի միջոցով՝ կառուցելով կաթսայատուն, որտեղ կտեղադրվեն գազային ջրաջեռուցիչներ: Տաք ջրամատակարարումն իրականացվելու է արևային ջրատաքացուցիչների միջոցով:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով՝ հեղեղատար համակարգի միջոցով: Գործարանի տարածքի ցածրադիր տեղերում կտեղադրվեն անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն գործող հեղեղատար ցանցին:

Գործարանի կառուցման շինարարության տևողությունը կկազմի 24 ամիս: Աշխատանքները կազմակերպվելու են այնպես, որ շինարարական աշխատանքներից չվնասվեն գոյություն ունեցող ծառերը: Կանաչապատման համար տնկվող ծառերի դասավորությունը լինելու է հիմնականում ցանկապատի եզրով: Շինհրապարակը նախապատրաստելու նպատակով կատարվելու են առկա կառույցների ապամոնտաժման և հողային աշխատանքներ: Ապամոնտաժվելու է տարածքում առկա 48x10մ չափերով շենքը, որի քանդումից առաջացած թափոնների մի մասը կօգտագործվի որպես պիտանի շինանյութ, իսկ 296մ^3 ծավալը, շինաղբի հետ միասին կտեղափոխվի Բալահովիտի համայնքապետարանի

կողմից հատկացված աղբավայր: Կառուցապատվող տարածքում կառույցների հիմքերի տակ մնացող բերրի հողաշերտը /միջինը 30սմ խորությամբ/, օրենսդրության պահանջներին համապատասխան կպահեստավորվի և կառուցապատման աշխատանքներից հետո կօգտագործվի գործարանի տարածքի բարեկարգման և կանաչապատման համար: Տարածքի կանաչապատման մակերեսը կկազմի 7612.5մ^2, հողամասի մնացած մասը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ շինությունները, ներքին ճանապարհները, սալվածքները և բաց պահեստները: Կանաչապատումը կիրականացվի տարածքի համար մշակված կանաչապատման և բարեկարգման պլաններին համապատասխան, որը կհամաձայնեցվի Բալահովիտի համայնքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է կաղնի, հացենի, թղկի և այլ ծառատեսակներ: Այս տեսակները հարմար են տեղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Կանաչ տարածքների ոռոգումն իրականացվելու է գործարանում տեղադրվուղ մաքրման կայանի աշխատանքի արդյունքում մաքրված ջրերով:

Ընկերության արտադրական գործընթացում չի նախատեսվում բարդ տեխնոլոգիական գործընթացներ, կամ քիմիական սինթեզ: Տեխնոլոգիական գործընթացները ներառում են՝ լուծույթների պատրաստումը, շաղացումը, պատրաստի հումքից հաբերի պատրաստումը, դեղամիջոցների փաթեթավորումը, պահեստավորումը և այլն: Սարքավորումները նախատեսված են ձեռք բերել ոլորտում հայտնի արտադրական ընկերություններից, իսկ հիմնական հումքը ներկրվելու է: Նախատեսվող բոլոր տեխնոլոգիաներն ապահովված են համապատասխան լիցենզիաներով:

Փաթեթավորման համար անհրաժեշտ նյութերը /ապակյա տարաներ, թուղթ, ստվարաթուղթ, ալյումինի ֆոլգա, պլաստիկ թաղանթներ և այլն/ ձեռք են բերվում պատրաստի: Մեծածավալ տարողությունները, շերը, կոնտեյներները, դրանց փաթեթավորման նյութերը վերադարձվում են մատակարարներին, կամ հանձնվում են ընդունող մասնագիտացված կազմակերպություններին՝ որպես երկրորդական հումք: Լուծույթների պատրաստման տեխնոլոգիական~~յում~~ ցիկլում ~~գործընթացում~~ կարտանետվեն աննշան քանակությամբ գոլորշիներ: Լաբորատոր սենյակներում շատ չնչին քանակներով կարող են առաջանալ դեղամիջոցների փոշու արտանետումներ: Դրանց արտանետումը կանխարգելելու, կամ բացառելու նպատակով բոլոր լաբորատոր սենյակները կահավորվելու են քարշիչ պահարաններով, որոնց օդաքարշ համակարգերը ապահովված կլինեն ֆիլտրերով /զտիչներ/: Ֆիլտրերի կլանիչ միջուկներն իրենցից ներկայացնում են ստվարաթղթային գործվածքային ներդիրներ, որոնք պարբերաաբար կարող են հանվել և լվացման հատուկ եղանակով մաքրվել:

Գործարանում նախատեսվում է արտադրել դեղամիջոցներ՝ հաբերի, փոշու /փաթեթ/ տեսքով և հեղուկ վիճակում /սրվակներ, դեղապատիճներ/: Նախատեսվող դեղամիջոցների ցանկը և տարեկան քանակները բերված են ՇՄԱԳ-ի հավելվածներում:

Արտադրությունը կիրականացվի դասական եղանակով, ներառելով հետևյալ գործընթացները՝ հումքի կշռաչափում, կարծր դեղանյութերի նախապատրաստում, հեղուկ բաղադրանյութերի նախապատրաստում, մաքուր (դեիոնիզացված կամ թորած) ջրի ստացում, բաղադրանյութերի խառնում, կարծր դեղանյութերի լուծում (դիսպերսացում), խառնում, հոմոգենիզացում (հոմոգենիզատոր), ֆիլտրում, առաջնային և երկրորդային փաթեթավորում, շաղացում և այլն:

ՇՄԱԳ-ում դիտարկվել և գնահատվել են Բալահովիտի դեղագործական գործարանի շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարական աշխատանքների

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ընթացքում, դեղագործական գործարանի շահագործման փուլում և գործարանի փակման ժամանակ:

Շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են հողային աշխատանքների ընթացքում և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում:

Շինարարության ընթացքում ջրամատակարարումն իրականացվելու է համայնքային ջրատարից, միացումը կատարվելու է առաջնահերթ: Ջուրն օգտագործվելու է հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Շինարարական աշխատանքների ջրապահանջը ընդամենը կկազմի՝ 2272.0մ^3, կամ միջին օրական՝ 12.9մ^3: Շինարարության փուլի կեղտաջրերի հավաքման համար նախատեսվում է շինհրապարակում տեղադրել 20մ^3 ծավալով անջրթափանց պատերով ստորգետնյա տարողություն, որը պարբերաբար կդատարկվի մոտակա կոյուղու ցանց:

Շինարարական աշխատանքների ընթացքում կվնասվի կառուցապատվող տարածքի 9800մ^2 մակերեսում հողային ծածկույթը: Նշված տարածքում առկա բերրի հողաշերտը՝ 2936մ^3 ծավալով կհանվի և կպահեստավորվի հատուկ միջոցառումներով, աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում:

Գործարանի շահագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը պայմանավորված կլինի կաթսայատան աշխատանքով, որը ձմռան սեզոնին կապահովի գործարանի ջեռուցումը: Տաք ջրամատակարարումը նախատեսված է իրականացնել արևային մարտկոցների միջոցով՝ ամբողջ տարվա ընթացքում: Ըստ նախնական գնահատման, բնական գազի տարեկան ծախսը կկազմի 216000մ^3, իսկ առավելագույն ժամայինը՝ 200մ^3/ժամ: Հաշվարկվել են տարեկան արտանետումները, համաձայն որոնց արդյունքների արտանետումները կկազմեն՝ ազոտի երկօքսիդի համար՝ 0.506տ/տարի, ածխածնի օքսիդի համար՝ 0.14 տ/տարի: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ /"Էռա" ("Эра") համակարգչային ծրագրով/, որոնք համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ: Համաձայն արդյունքների՝ բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները, հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-երը: Մթնոլորտային օդին հասցվող տնտեսական վնասը գնահատվել է 25830 ՀՀ դրամ/տարի:

Դեղագործական գործարանի շահագործման ժամանակ ջուրը արտադրական նպատակներով կօգտագործվի լուծույթների պատրաստման, սարքերի, տարողությունների լվացման, տարածքների մաքրման, ինչպես նաև անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար: Հաշվի առնելով գործարանի արտադրատեսակների ցանկը, հզորությունները և արտադրական գործընթացները, արտադրական արտահոսքը առաջին տարում կկազմի 520մ^3, իսկ սկսած երկրորդ տարուց՝ 1040մ^3/տարի: Իսկ խմելու և տնտեսական ջրապահանջը կկազմի՝ 4700.8 մ^3/տարի, կամ 18.08մ^3/օր: Գործարանից ջրահեռացումը /արտադրական հոսքաջրեր և կենցաղային կեղտաջրեր/ ընդհանուր կկազմեն՝ 5401.8մ^3/տարի կամ 20.8մ^3/օր: Բոլոր արտադրական տեղամասերը կահավորված կլինեն արտահոսքերի հավաքման առանձին համակարգով, ներառյալ՝ հատակների լվացումը: Արտահոսքը կհավաքվի մեկ խողովակի մեջ և կհոսի մաքրման կայան, որի հզորությունը 70մ^3/օր է: Մաքրման կայանը նախատեսված է արտադրական և կենցաղային կեղտաջրերի մաքրման համար և կարող է ապահովել մաքրված ջրերի այնպիսի որակ, որ հնարավոր լինի օգտագործել ոռոգման նպատակով, կամ ուղղել համայնքային կոյուղու ցանց: Մաքրված ջուրը ոռոգման սեզոնին /150 օր/ կօգտագործվի ոռոգման նպատակով, իսկ ոռոգումից դուրս

կուղղվի գործարանի տարածքում կառուցվող կոյուղու արտաքին խողովակին, որը կմիանա «Կոտայք» գարեջրի գործարանի կոյուղատարին /նախնական համաձայնեցումը կցված է ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում/: Կայանի աշխատանքի ընթացքում 70մ^3/օր կեղտաջրերից կառաջանա 73կգ նստվածք /տարեկան՝ 18980կգ կամ 19տ/: Նստվածքը իրենից ներկայացնում է տիղմի տեսքով օրգանական նյութերի խառնուրդ, ինչը համարվում է բարձրակարգ պարարտանյութ և կարող է տրամադրվել գյուղացիներին:

«Արփիմեդ» դեղագործական գործարանի շահագործման ընթացքում առաջացող արտադրական թափոններ են հանդիսանում՝ դեղամիջոցները, կամ դեղամիջոցների հետ առնչվող նյութերը, որոնք դասվում են առողջապահական թափոններին շարքին և գործող պայմանագրի համաձայն կտեղափոխվեն լիցենզավորված՝ «Էկոլոգիա» ՍՊ ընկերությանը պատկանող թափոնների վնասազերծման կայան:

Դեղագործական գործարանի շահագործման ընթացքում առաջանում է նաև կենցաղային աղբ և գրասենյակային թափոն /թղթի և ստվարաթղթի թափոն/: Ելնելով Ընկերության այլ գործարանի արտադրական փորձից, Բալահովիտի գործարանի շահագործման ընթացքում կառաջանա 800–1000կգ/տարի, որը գործող պայմանագրի շրջանակներում կվաճառվի «Սոֆտեքս» ՍՊԸ թղթի վերամշակման լիցենզավորված ձեռնարկությանը: Իսկ կենցաղային թափոնները՝ 57.6մ^3/տարի ծավալով, կհեռացվեն Բալահովիտի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են գործարանի շինարարության և շահագործման ընթացքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքմանը և աշխատողների անվտանգությանը: «Արփիմեդ» դեղագործական գործարանի շինարարության և շահագործման փուլերի համար կազմվել է բնապահպանական կառավարման պլան, որում ներառվել և ամփոփվել են հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի, կենսաբազմազանության, սոցիալական բաղադրիչի վրա հնարավոր ազդեցությունները և դրանց մեղմացնող միջոցառումները:

Բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը գնահատվել են 1 մլն. 350.0 հազար ՀՀ դրամ:

Պարճառաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության և կարևորվել է աշխատատեղերի ստեղծումը /մոտ 400 աշխատատեղ/, որում ընդգրկվելու են հիմնականում Բալահովիտ համայնքի բնակիչները: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարություններից և Կոտայքի մարզպետարանից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել ՇՄԱԳ-ի լրամշակումներում:

Ընկերության կողմից կառուցվող դեղագործական գործարանը կունենա ժամանակակից պահանջներին համապատասխանող արտադրություն և որակի հսկման տեխնոլոգիա: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված միջոցառումների իրականացման արդյունքում ինչպես գործարանի շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ գործունեության լիցենզիա:
2. Գործունեության ընթացքում առաջացող թափոնների համար սահմանված կարգով մշակել թափոնի անձնագիր, համաձայնեցնել այն շրջակա միջավայրի նախարարության հետ և թափոնի տեղադրումն իրականացնել ըստ անձնագրի:
3. Արտադրական գործընթացում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
4. Դեղագործական գործարանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել տեխնոլոգիական բոլոր գործընթացները, աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար կարևորել՝ օդաքարշ համակարգերի ֆիլտրերով /զտիչներ/ ապահովումը և դրանց ժամանակին մաքրումը:
5. Գործարանի շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումը, վնասազերծումը, կամ կրկնակի օգտագործումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնավորապես, դեղագործական թափոնների վնասազեծման գործընթացներն իրականացնել սանիտարական նորմերին համապատասխան:
6. Գործարանի շահագործման փուլում վերահսկել կաթսայատան աշխատանքը՝ արտանետումների քանակները թույլատրելի նորմերի սահմաններում պահելու նպատակով:
7. Վերահսկել մաքրման կայանի աշխատանքի արդյունավետությունը և մաքրման կայանում մաքրված ջրերը ոռոգման նպատակով օգտագործել, կամ կոյուղու կոլեկտոր հեռացնել՝ հոսքաջրերում պարունակող նյութերի /ԹԿՊ$_{լրիվ}$ և ԹՔՊ կախված մասնիկներ/ որակական ցուցանիշների ապահովման դեպքում:
8. Կայանի աշխատանքի ընթացքում առաջացող նստվածքը /տիղմ/ որպես պարարտանյութ օգտագործել լաբորատոր փորձարկումից հետո՝ որակական ցուցանիշների ապահովման դեպքում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արփիմեդ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող Դեղագործական գործարանի կառուցման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան